

է դարձվել պետական, գերատեսչական արխիվների կոմպլեկտավորման, փաստաթղթերի գիտական մշակման, հրատարակման, միկրոպատկերահանման և կադրերի որակի բարձրացման վրա:

Անցած՝ 1963 թ. ՄԱՌՄ Միեմբերների սովետը և Հայկական ՄԱՌ Միեմբերների սովետը հաստիք սրահում են ընդունել արխիվային գործի զբաղմունքի բարելավման մասին: Այդ որոշումների կատարման համար մշակված ու հաստատված են գործնական պլաններ և, կարելի է ասել, որ սեկտորիկայում ընդ գործ չի արված: Հատկապես ուշադրություն է դարձվում տեխնիկական, նախագծային փաստաթղթերի հաշվառմանն ու պահպանմանը:

Մեր սեկտորիկայի մի շարք միեմբերություններ, գերատեսչություններ, առաջատար խոշոր ձեռնարկություններ և ուսումնական հաստատություններ լուրջ և բարեխիղճ գործ են կատարում այդ ուղղությամբ: Միեմբերների սովետին կից կենտրոնական վիճակագրական վարչությունը, պետ. պլանային հանձնաժողովը, ֆինանսների միեմբերությունը, Հայկ. ՄԱՌ-գիտ. ակադեմիայի նախագահությունը, նրանի պոլիտեխնիկական ինստիտուտը, պետական համալսարանը, նրանի քաղաքակրթ., Հայկ. Եկարոշին գործարանը և մի շարք այլ կազմակերպություններ պատշաճ ուշադրություն են դարձնում իրենց արխիվային նյութերի մշակմանն ու պետական պահպանությանը: Երանց կողքին կարելի է նշել այնպիսի հիմնարկ-ձեռնարկների, որոնք շատ սխալ և ոչ լուրջ վերաբերմունք են ցույց տալիս դեպի պատմա-գիտական նշանակություն ունեցող փաստաթղթերի մշակումն ու դրանց պետական պահպանության հանձնումը:

Պետական կենտրոնական արխիվների հետադա հարստացումը մեծ չափով կախված է գե-

րատեսչական արխիվների աշխատանքների զբաղմունքից, և մենք այս ուղղությամբ շատ անելիքներ ունենք:

Սեկտորիկայի պետական կենտրոնական արխիվների հետագա հարստացման և փաստաթղթերի լայն մասշտաբներով սպասարկման զբաղմունքի ընդհանուր բարելավման համար մեծ նշանակություն ունի սեկտորիկայի գիտական ազդեցական հաստատությունների և այլ կազմակերպությունների հետ մեր կապերի ուժեղացումը: Հատկապես մեծ նշանակություն ունի մեր կապերի ուժեղացումը Մատենադարանի, գրականությանն ու արվեստի, պատմության, թանգարանների, Մյասնիկյանի անվան պետական գրադարանի հետ: Մենք պետք է մշտական կապ հաստատենք նաև Հայկ. ՄԱՌ գիտությունների ակադեմիայի պատմության և գրականության ինստիտուտների հետ:

Արտասահմանյան երկրների հետ կուլտուրական կապի պահպանման ընկերությունը, Հայկ. ՄԱՌ արտաքին գործերի միեմբերությունը, Հայկ. ՄԱՌ Միեմբերների սովետին առնթեր Հայկական եկեղեցական գործերի կոմիտեն, Հայկ. ՄԱՌ Միեմբերների սովետին կից պլանային հանգրսանում են այն հիմնական որդաններ, որոնք լայն հնարավորություններ ստեղծեն սպեկու և աշակցելու՝ սեկտորիկայի պետական կենտրոնական արխիվները նոր փաստաթղթերով, վավերագրերով, գրականությամբ ու սուլերական մամուլով հարստացնելու գործին: Եվ պետք է ասել, որ նրանք արդեն արդյունավետ կառավարվում են այդ ուղղությամբ:

Ա. ՀԱՐՈՍԹՅԱՆՆԻ

(Հայկ. ՄԱՌ Միեմբերների սովետին առնթեր արխիվային վարչության պետ)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

DAVID DE SASSOUN. Épopée en vers. Traduit de l'arménien avec une introduction et des notes de Frédéric Feydit. Préface de Joseph Orbéil. Le Mensil-sur-l'Éstrée (Eure), Gallimard, 1964. 400 p. (Caucase, Collection UNESCO d'Oeuvres Représentatives. Série Arménienne).

«Մասունցի Ղափիթ» ժողովրդական հերոսական էպոսի հրատարակությունն է, որը մեծ վարպետությամբ ֆրանսերենի է թարգմանել անվանի հայապետ Ֆրեդերիկ Ֆեյդիտ և չքնդուպարությամբ լույս է բնծայվել Ֆլորանսի-ի սատենաշարով: Թարգմանությունը կատարված

է Լյուսի հապարամյա հորեկյանի առթիվ 1939 թ. լույս տեսած համահավաք բնագրից:

Գրքի սկզբում (էջ 9—34) գետնված է հայերեն համահավաք բնագրի համար ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գրած առաջարանը, որին հաջորդում է Թարգմանչի՝ Փարիզի արևելյան կենդանի լեզուների ազգային դպրոցի դասախոս, պրոֆեսոր Ֆրեդերիկ Ֆեյդիտի ներածական հոդվածը (էջ 35—50):

Ներածության մեջ խոսվում է հայ գրականության տասնհինգերորդ հարյուրյան մասին: Հեղինակը առանձնապես անդրադառնում է հայկական առասպելներին, հմտորեն համեմատում

ժ. դյուցազնավեպի հերոսներին հայկական ա-
ռասանների հերոսների հետ: Ֆեյդին ցույց է
տալիս, որ Հյուսիս հերոսները իրենց ծննդի
հիշատակներով կապված են հայ ժողովրդա-
կան հնագույն առասպելների հերոսների հետ
և մարդկային կերպարների մեջ մարմնավորում
են բնության ուժերը, իսկ բնավորության գծե-
րով իրական մարդիկ են, օժտված արիության
և մարդասիրության վեհ հատկություններով:

Ֆ. Ֆեյդին խոսում է նաև Հյուսիս միջնադար-
յան ծագման հարցի, նրա բազմաթիվ պատում-
ների, չորս ճյուղերի մասին: Նշանավոր հայա-
գետի քննության նյութ են դարձել դյուցազնա-
վեպի գաղափարական հարուստ բովանդակու-
թյունն ու հերոսների կերպարները, Հյուսիս կոտ
կառուցվածքն ու ոճի պատկերավորությունը:

Դրբի 51—398 էջերը պարունակում են «Սա-
տուցի Դավիթ» դյուցազներգության չորս ճյու-
ղերը:

Խարզմանիչը ամենայն հավատարմությամբ
և բարեխղճությամբ վերարտադրել է բնագիրը,
առանձին ուղղորդյուն դարձնելով պատկեր-
ների և մետաֆորների վրա՝ ձգտելով ճշտորեն
արտահայտել բնագրի ժողովրդական արտա-
հայտությունները, հարկ եղած դեպքում տա-
լով նաև հատուկ ծանոթություններ: Այս բոլո-
րով հանդերձ թարգմանիչը համեստորեն եզրա-
փակում է իր ներածությունը, ասելով թե՛
«...լուս ունենք, որ ֆրանսերեն այս թարգմա-
նությունը հնարավորություն կտա արևմտյան
բնթերցողին բմբռնելու ժողովրդական այս
ուրախապ դյուցազներգության ամբողջ համար-
վելի արև...»: Այս հրատարակությամբ Դա. ունցի
Դավիթ» Հյուսիս ոչ միայն վերապրեց մի այլ
գլուխ ևս, այլև ստար բնթերցողները հիանալի
առիթմի ստացան ծանոթանալու միջնադարյան
հայ գեղարվեստական խոշորագույն կոթողնե-
րից մեկին:

Manandian Hagop. TIGRANE II
ET ROME. Nouveaux éclaircissements a la
lumière des sources originales. Traduit de
l'arménien oriental par H. Thorossian. Avant-
propos de Jérôme Carcopino. Lisbonne, Im-
prensa Nacional, 1963. 224 p. (Bibliothèque
Arménienne de la Fondation Calouste Gul-
benkian).

Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի «Տիգրան
երկրորդը և Հռոմը» հայտնի աշխատության
ֆրանսերեն առաջին հրատարակությունն է, որ
հրատարակվել է Լիսաբոնում, 1963 թվականին:

Ինչպես հայերեն և ուսերեն հրատարակու-
թյուններում, այս հրատարակության վերջում
ևս կան օժանդակ ցանկեր՝ աղբյուրների համա-
ռոտ տեսություն (էջ 195—197), աղբյուրների
ցանկ (էջ 199—201), գրականության ցանկ (էջ

203—205), ժամանակագրական աղյուսակ (էջ
207—208), բարոնների և նկարների ցանկ (էջ
209) և հատուկ անունների այբբենական ցանկ
(էջ 211—220):

Իրբի վերջում խոսվում է նաև Հ. Հ. Մա-
նանդյանի հրատարակած աշխատությունների
մասին, և տրված է հեղինակի հայերեն, ֆրա-
սերեն և գերմաներեն 31 դիմավոր աշխատու-
թյունների բիբլիոգրաֆիան:

Դիրքը բարեխղճությամբ և գեղեցիկ ոճով
ֆրանսերենի է թարգմանել Հրանտ Թորոսյանը:
Ներկա թարգմանությունը մի խոսքով ասելով է
հայ ժողովրդի պատմությունը օտարների ծա-
նոթացնելու դործում, որտեղ քիչ գեր չի կա-
ռարել անվանի հրապարակագիտն ու մշակու-
թային գործիչը՝ հատկապես այս վեպին տա-
րիների ընթացքում ֆրանսերեն լեզվով լույս
ընծայած իր մի քանի արժեքավոր հրատարա-
կություններով:

Դրբի ներածականը (էջ V—X) դրել է ժերմ
կարկոպիտն, որը բարձր է գնահատում հայ
պատմաբանի այս աշխատությունը: Երբ աշխա-
տանքը, գրում է ներածականի հեղինակը՝
մեզ ներկայանում է գիտական մեթոդի ամե-
նախիստ կանոնների ճշգրիտ համապատասխա-
նությամբ: Հոռմեական աշխարհակալությունը
ուսումնասիրող պատմաբանները պարտավոր են
ճանաչել այն ծառայությունները, որ մատուցում
են հանգուցյալ պրոֆեսոր Մանանդյանի հետա-
զոտությունները:

REVUE DES ETUDES ARMENIENNES.
Nouvelle série Tome I. Comité de rédaction:
E. Benveniste, Cl. Cahen, M. Canard, S. Der
Nersessian, G. Dumezil, A. Dupont-Sommer,
F. Fejdit, A. Grabar, P. Lemerle, Ch. Mer-
cier, A. Mirambel, L. Robert. Dépositaire:
Librairie Klincksieck, Paris, 1964. [Louvain,
Imprimerie Orientaliste]. 496 p.

1920 թ. անվանի հայագետներ Անտուան Մե-
յեի և Ֆեյդերիկ Մակլերի կողմից հիմնադրված
այս հանդեսը, որը մինչև 1933 թ. լույս տեսավ
22 տետրակներով, երկար ընդհատմից հետո
սկսեց հրատարակվել, նոր խմբագրական կո-
միտեում ընդգրկված հայագիտության տարրեր
ընագավառների 12 ներկայացուցիչների ջան-
քերի շնորհիվ:

Խմբագրության ղեկավար էմիլ Բենվենիստը
նախարարում գրում է, որ հանդեսը լայնորեն
ուսց է անում իր էջերը բոլոր երկրների գիտնա-
կանների առջև և հրատարակելու է հայագիտու-
թյան տարրեր ճյուղերի՝ լեզվաբանության ու
բանասիրության, պատմության ու հնագիտու-
թյան, բանահյուսության և ազգագրության հար-
ցերի վերաբերյալ գիտական հոդվածներ:

Հանդեսի առաջին՝ «Հողվածներ» բաժնում հաշվադրում ենք 20 հետաքրքիր ուսումնասիրությունների, որոնցից նշենք է. Բենվենիստի «Պարթևական տարրերը հայերենում» (էջ 1—35), Պ. Յունգուսի «Որոշիչ լոգի գործառնությունը գոյական անվան հետ դասական հայերենում» (էջ 47—99), Սիրարփի Տեր-Ներսեսյանի «Ուկրաինյի մասնատուփը և կիլիկյան ոսկերչությունը XIII և XIV դարերում» (էջ 121—147), Խմբագրության քարտուղար Հ. Պերպերյանի «Անանիա Շիրակացու ինքնակենսագրությունը» (էջ 189—194) և ուրիշներ։ Հողվածներում ունեն նաև ռուսարագի հայագետներ Լ. Թոմսոնը (Փամբուրիցի), Մուլլերմանսը (Հուվենից), Պ. Լեմերլը և ուրիշներ։

Հայաստանում հրապարակված աշխատությունները արևմտյան գիտնականներին մատչելի դարձնելու նպատակով հանդեսում բաժանական տեղ է հատկացված նրանց թարգմանություններին։ Սովետական դանազան պարբերականներին և ժողովածուներին թարգմանաբար հրատարակվել են Գ. Արդարյանի, Բ. Չուգասրգյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Թ. Սահակյանի և ուրիշների աշխատությունները՝ «Հանդեսում» տպագրված են աղագետիկոս Աշոտ Հովհաննիսյանի «Պետրոս դի Սարգիս Գիլաննից» պատմականաչրական ուսումնասիրությունը, Լեւինգրադի գիտնական Տ. Իդմայիլովայի «Մատենադարանի № 2877 ձեռագրի պատկերագրությունը» հողվածը (էջ 149—187)։

Հանդեսն ունի նաև «Հաղորդումներ», «Տոնակատարություններ և համաժողովներ», ինչպես նաև այլ բաժիններ, որտեղ նույնպես ընդգրկված են արժեքավոր նյութեր և հետաքրքիր տեղեկություններ։

Գ ր ի գ ո Ր ի ս Ա Ր Հ ա Ր Ո Ւ Ն Ի Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ն Ը Ն Թ Ի Ն Ի Յ Ո Ւ Ա Մ Ո Յ։ Ներածություն Քերովրե Չրաբյանի Վենետիկ, Ս. Ղազար, 1964, 223 էջ (Հայկական մատենաշար Դալուստ Կյուպենկյան հիմնարկության)։

Գիրքը բաղկացած է երկու մասից՝ ներածություն և բնագիր։ Ընդարձակ ներածությունը

(էջ 9—81) ունի հինգ գլուխներ՝ Ա. Գրիգորիս Արշարունի, Բ. Վահան Պատրիկ Կամսարական, Գ. Չեռագիր, Դ. Առաքավորաց-Քառասնորդաց պահար և Ն. Բովանդակություն Մեկնության։ Ներածության մեջ Քերովրե Չրաբյանը համառոտակի բնություն է ենթարկում փիլիսոփա տիտղոսին արժանացած և իր կյանքով մեղ թիչ ծանոթ Գրիգորիս Արշարունու անձի հարցը։ Չրաբյանն այստեղ խոսում է նաև միջնադարյան հայ հնդիակի ուժի, գրքի առանձին գլուխներում տեղ գտած համեմատությունների, հարաբերակա հին սովորությունների, դանազան աշխարհական ակնարկությունների մասին։ Ներածությունում տեղեկություններ կան նաև Վահան Պատրիկ Կամսարականի մասին, որի խնդրանքով է հորինել հնդիակը իր մեկնությունը։ Չրաբյանը մանրամասն նկարագրում է Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի № 475 ձեռագիրը, որն ունի «Գրիգորիսի Արշարունու Քորեպիսկոպոսի Մեկնության ընթերցումը» վերնագիրը։ Այնուհետև նա ներկայացնում է ձեռագրի պարունակությունը, որտեղից մենք տեղեկանում ենք, որ XI դարի ձեռագրի այս օրինակի մեջ կան նաև Հովհաննես Օճնցու հրեք ճառերը (էջ 207—267), Մովսես քերթողհոր «Ցազագա կարգաց եկեղեցույ բացայայտեալ ի շնորհաց հոգույն սրբոյ» գրությունը (էջ 267—278)։ Գրադրին կցված են նաև Սամվել Կամբաձորեցու հինգ ճառերը (էջ 279—400), իսկ 401—462 էջերը պարունակում են Մարսիմոս փիլիսոփայի «Ճառք յազգս եկեղեցույ» հունարեն գրությունը հայերեն թարգմանությունը։

Այս գրքի հիմնական մասն է կազմում «մեկնություն» Ընթերցումը Վորեպիսկոպոսի» աշխատության բնագիրը (էջ 83—215)։ Հետագա ուսումնասիրողների համեմատության աշխատանքները դուրացնելու նպատակով այս հրատարակության լուսանցքում նշանակված են ձեռագրի էջերը։

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ